

## ՀԱՆԳԷՍՔ Ի ԾԱՂԿԱԶԱՐԳԻ ԱՒՈՒՐ

Եւ կայ բարի սահման մի այլ յԵՐՈՍԱՂԷՄ  
 Յռանկայ, որ ամէն տարի զՔրիստոսի տնօ-  
 րինականքն դործովք կատարեն, որպէս ի  
 Հռոմ: Ձի Ղազարու ուրբաթն հարպետն պա- 120  
 րոնին տասուորն գնայ ի բերթն, ուր Գերեզ-  
 ման է Ղազարու, եւ անդ պատարագ մատու-  
 ցանէ հարեղայիւք. եւ անդ գօրն եւ զբիշերն  
 հսկմամբ անցուցանէ: Եւ ընդ առաւօտն Մառ-  
 զարդարի կրկին հեծնու էչ եւ հարեղայքն ա- 125  
 ռաջի եւ զկնի՝ գան իջանեն Ձիթենեաց լեռնէն  
 ի վայր ձիթենեօք եւ արմաւենեօք. եւ մտեալ  
 ի քաղաքն անցանեն սուրբ Յակոբայ առջևով,  
 զի այն է ճանապարհ. եւ Հայք ելանն ի դուրս  
 վանացն ընդ առաջ նոցա. ոմանք զհանդերձս 130  
 տարածեն ներքոյ իշոյն, եւ այլք զտօլարանտս  
 զլխոց. իսկ կէսք ոստս ի ծառոց եւ տերեւս  
 ձիթենոյ եւ արմաւենոյ մատուցանէին, որպէս  
 Հրեայքն Յիսուսի. եւ այսպիսի փառօք եւ  
 պատյով մեծարելով զհետ երթային. զոր եւ 135  
 մեք աչօք մերովք տեսաք<sup>1</sup>:

121 յուր: — 127 ձիթենօք եւ յարմաւենօք: —  
 132 յոստս: — 134 հրէայք:

<sup>1</sup> Մաղկազարդի այս հանդէսը յառաջագոյն Հայերը  
 կը կատարէին, բայց սոքա խափանուած էր: Յետոյ  
 Փրանկիսիկանները սկսան միւսանդամ կատարել: Տեղի  
 կ'ունենար ժողովրդեան այնպիսի խռոն մասնակցու-  
 թեամբ եւ խանդավառութեամբ, որ նոյն իսկ մահմե-  
 դականները կը դիմէին հանդիսատես եւ փառարանա-  
 կից ըլլալու: Քրիստոնէից յաղթական մուսլման էր այն  
 եւ քաղաքին համար թատերական տեսարան մը: Չուն  
 գեղեցիկ նկարագրած է Guglingen, Itinerarium, 138: